

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

---

« \_\_ » \_\_\_\_\_ 2008թ.

**ՆԱՍԴԱՔ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՈՒԿԱՅԻՆ  
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ**

## **Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ**

- 1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Բորսայի կանոններով սահմանված նշանակությունները:
- 2) Բորսայի կանոններին համապատասխան Բորսայի Օպերատորի կողմից կազմակերպվող որևէ շուկայում բորսայական առևտրին ուղղակիորեն կարող են մասնակցել միայն տվյալ շուկայի մասնակիցները: Շուկայի մասնակից կարող են լինել միայն Բորսայի անդամները, եթե այլ բան սահմանված չէ Բորսայի կանոններով:
- 3) Բորսայի անդամ կարող են լինել միայն ներդրումային ծառայություններ մատուցող այն անձինք, որոնք բավարարում են Բորսայի կանոններով սահմանված պահանջներին:
- 4) Բորսայական առևտրին մասնակցելու համար Բորսայի անդամները Բորսայի Օպերատորի հետ կնքում են առևտրային պայմանագիր (պայմանագրի ստանդարտ պայմանները և օրինակելի ձևը սահմանված են սույն կանոնների Հավելված 15-ով):  
*(4-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)*
- 5) Սույն կանոնների՝ Բորսայի անդամներին վերաբերող դրույթները տարածվում են Բորսայի անդամի կարգավիճակ չունեցող շուկայի մասնակիցների վրա, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:

## **Գլուխ 2. Բորսայի անդամ դառնալու համար ներկայացվող փաստաթղթերը**

- 1) Բորսայի անդամ դառնալու համար Բորսայի Օպերատորին ներկայացվում է դիմում (այսուհետ՝ Դիմում), որը բաղկացած է Դիմումի տիտղոսաթերթից և սույն գլխի 3) կետում սահմանված տեղեկությունները ներառող ձևերից և փաստաթղթերից:
- 2) Սույն կանոններով պահանջվող բոլոր փաստաթղթերը Բորսայի Օպերատորին են ներկայացվում տպագիր և հայերեն լեզվով: Եթե ներկայացվող փաստաթղթի բնօրինակը անգլերեն կամ ռուսերեն լեզվով է, ապա դրա հայերեն տարբերակը կարող է չներկայացվել Օպերատորի համաձայնությամբ:
- 3) Բորսայի անդամ դառնալու համար դիմորդը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝
  - ա) Դիմումի տիտղոսաթերթը՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի,
  - բ) Դիմում Բորսայի առևտրային համակարգում Դիմորդի իրավունքների վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների Հավելված 2-ի,
  - բ) տեղեկություններ դիմորդի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնների Հավելված 3-ի,
  - գ) դիմորդի անունից առևտրին մասնակցելու համար լիազորված առևտրի մասնակիցների ինքնության վերաբերյալ տեղեկություններ՝ առևտրի յուրաքանչյուր մասնակցի համար առանձին՝ համաձայն սույն կանոնների Հավելված 4-ի,
  - դ) առևտրի մասնակցին տրված լիազորագիրը՝ առևտրի յուրաքանչյուր մասնակցի համար առանձին՝ համաձայն սույն կանոնների Հավելված 5-ի,
  - ե) դիմորդի անունից դիմորդի կարգավիճակով առևտրային համակարգին միանալու թույլտվություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ յուրաքանչյուր դիմորդի համար առանձին՝ համաձայն սույն կանոնների Հավելված 6-ի,
  - զ) տեղեկություններ Մասնակցի իրավասու դրամային, ինչպես նաև իրավասու դեպո և/կամ արտարժույթային հաշիվների վերաբերյալ՝ պետական պարտատուների և/կամ արտարժույթի բորսայական առևտրին մասնակցելու համար (Հավելված 7-ում նշված օրինակելի ձևին համապատասխան),
  - է) եթե Մասնակցի որևէ իրավասու հաշիվը վարվում է Հաշվարկային բանկում, ապա Մասնակցի գրավոր համաձայնությունը (երկու բնօրինակ) Բորսայի կանոններով նախատեսված դեպքերում և չափով՝ Հաշվարկային բանկում վարվող իր դրամական և/կամ դեպո հաշիվներից համապատասխան միջոցների գանձման իրավունքը Բորսային վերապահելու մասին՝ նշելով համապատասխան հաշվեհամարները (Հավելված 8-ում նշված օրինակելի ձևին համապատասխան),
  - ը) եթե առևտրի իրավունք ունեցող կազմակերպության որևէ իրավասու հաշիվը վարվում է Հաշվարկային գործակալի մոտ, ապա Մասնակցին սպասարկող Հաշվարկային գործակալի գրավոր համաձայնությունը (երկու բնօրինակ) Բորսայի կանոններով նախատեսված դեպքերում և չափով տվյալ Հաշվարկային գործակալի՝ Հաշվարկային բանկում վարվող դրամական և/կամ դեպո հաշիվներից համապատասխան միջոցների գանձման իրավունքը

Բորսային վերապահելու մասին՝ նշելով համապատասխան հաշվեհամարները (Հավելված 9-ում նշված օրինակելի ձևին համապատասխան):

- բ) դիմորդի տարեկան և/կամ միջանկյալ հաշվապահական հաշվեկշիռը՝ սահմանված ձևին համապատասխան,
  - գ) պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի պատճենը,
  - ժա) կանոնադրության պատճենը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության դեպքում՝ օտարերկրյա ներդրումային ընկերության գրանցման երկրի օրենսդրության համաձայն՝ ներդրումային ընկերության գրանցման վկայականի, կանոնադրության կամ այլ հիմնադիր փաստաթղթերի և ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիայի նոտարական կարգով վավերացված պատճենները հայերեն լեզվով, այդ թվում՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության կանոնադրության պատճենը,
  - ժբ) հարկային հաշվառման վերցնելու փաստաթղթի պատճենը (ՀՎՀՀ – Հարկ Վճարողի Հաշվառման Համարը),
  - ժգ) դիմորդի գործադիր մարմնի ընտրման կամ նշանակման մասին որոշման պատճենը (կոլեգիալ գործադիր մարմնի դեպքում՝ դրա անդամների և ղեկավարի ընտրումը կամ նշանակումը հավաստող փաստաթղթի պատճենը), օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության դեպքում՝ օտարերկրյա ներդրումային ընկերության կառավարման համապատասխան մարմնի որոշման պատճենը մասնաճյուղի կամ ներկայացուցչության ղեկավարի նշանակման մասին,
  - ժդ) դիմորդի լիցենզիաների պատճենները,
  - ժե) սույն կանոնների Հավելված 3-ի 5-րդ կետում նշված անձանց, ինչպես նաև առևտրի մասնակիցների անձնագրի (անձնագրի բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի) պատճենները,
  - ժզ) սույն կանոնների Հավելված 3-ի 5-րդ կետում նշված անձանց, ինչպես նաև առևտրի մասնակիցների մասնագիտական որակավորման վկայականների պատճենները, (առկայության դեպքում),
  - ժէ) հաշվարկային համակարգին անդամությունը հավաստող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում),
  - ժը) եթե դիմորդը բանկ կամ վարկային կազմակերպություն է, ապա Կենտրոնական բանկ ներկայացված՝ ներդրումային ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկացման պատճենը (առկայության դեպքում),
  - ժթ) դիմորդի գործադիր մարմնի ղեկավարի կողմից ստորագրված և կնքված առևտրային պայմանագիրը,
  - ի) վարկային ռեսուրսների շուկայում առևտրին մասնակցելու համար՝ Հաշվարկային բանկի հաստատումը Մասնակցի կողմից Հաշվարկային բանկում վարվող սեփական հաշվից միջոցներ գանձելու իրավունքը Հաշվարկային բանկին վերապահված լինելու մասին (Հավելված 11-ում նշված օրինակելի ձևին համապատասխան):  
**(ի) կեսի լրացումը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)**
- 4) Դիմորդի կողմից Բորսայի Օպերատորին ներկայացվող փաստաթղթերի փաթեթը պետք է լինի արժանահավատ, ամբողջական և պարունակի պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը:
- 5) Սույն գլխում պահանջվող փաստաթղթերի պատճենների փոխարեն կարող են ներկայացվել դրանց բնօրինակները: Պատճենների ներկայացման դեպքում դրանք պետք է ստորագրված լինեն դիմորդի գործադիր մարմնի ղեկավարի կողմից, կնքված դիմորդի կնիքով և ներկայացվեն «խսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

### **Գլուխ 3. Բորսայի անդամի կարգավիճակի շնորհումը**

- 1) Դիմումը ներկայացված է համարվում դրա ստացման պահից: Բորսայի Օպերատորը Դիմումը բավարարելու (մերժելու) մասին որոշում է ընդունում Դիմումը ստանալու պահից առավելագույնը տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:
- 2) Դիմորդի կողմից ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների ստուգման նպատակով Բորսայի Օպերատորը կարող է դիմորդից, Շուկայի մասնակիցներից պահանջել լրացուցիչ տեղեկություններ, պետական մարմիններից հայցել անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև ուղարկել իր ներկայացուցչին՝ տեղում ծանոթանալու անհրաժեշտ փաստաթղթերին:

- 3) Եթե Դիմումն ուսումնասիրելու ընթացքում դրանում ներառված տեղեկություններում և/կամ փաստաթղթերում տեղի են ունեցել փոփոխություններ, ապա դիմորդը պարտավոր է ներկայացնել նաև փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերի փոփոխված տարբերակները մինչև Բորսայի Օպերատորի կողմից Դիմումի բավարարման (մերժման) մասին որոշման ընդունումը: Այդ դեպքում Դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը Բորսայի Օպերատորի կողմից ստանալու պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխված տեղեկությունները ներկայացվում են Բորսայի Օպերատորի համաձայնությամբ:
- 4) Դիմումն ուսումնասիրելու ընթացքում դրանում թերություններ (վրիպումներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և նման այլ բացթողումներ) հայտնաբերելու դեպքում մինչև Դիմումի բավարարման (մերժման) մասին որոշման ընդունումը Բորսայի Օպերատորը առնվազն 7 (յոթ) աշխատանքային օր առաջ դիմորդին տեղեկացնում է հայտնաբերված թերությունների մասին: Դիմումը բավարարելու մասին որոշում կարող է ընդունվել, եթե դրանք ուղղվել են դրանց մասին դիմորդին տեղեկացնելու օրվանից առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում Դիմումի մերժման մասին որոշում է ընդունվում:
- 5) Դիմորդին Բորսայի անդամի կարգավիճակ շնորհելու մասին որոշումն ընդունում է Բորսայի Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը՝ նշելով այն շուկաները և/կամ հարթակները, որոնցում թույլատրվում է մասնակցել առևտրին, եթե ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները համապատասխանում են Օրենքին, այլ իրավական ակտերին, Բորսայի կանոններին, և առկա չեն դիմումը մերժելու համար սույն կանոններով սահմանված հիմքերը:
- 6) Դիմումի համաձայն Շուկայի մասնակցի կարգավիճակ հայցած Դիմորդին Բորսայի կողմից կազմակերպվող՝ կորպորատիվ արժեթղթերի շուկայում առևտրին մասնակցելու իրավունք չի կարող շնորհվել: Շուկայի մասնակցին կորպորատիվ արժեթղթերի շուկայում առևտրին մասնակցելու թույլտվություն կարող է շնորհվել միայն վերջինիս կողմից Բորսայի անդամի կարգավիճակ ստանալուց հետո:
- 7) Որոշումն ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դիմորդին տրվում է որոշման մեկ օրինակը:

#### **Գլուխ 4. Առևտրին մասնակցության թույլատրումը**

- 1) Բորսայի Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը Բորսայի անդամի կարգավիճակ շնորհելու մասին որոշման հետ միաժամանակ ստորագրում և կնքում է դիմումով ներկայացված առևտրային պայմանագիրը, որով Բորսայի անդամին թույլատրվում է մասնակցել բորսայական առևտրին:
- 2) Առևտրային համակարգում Բորսայի անդամի՝ առևտրին մասնակցության թույլատրման հետ կապված անհրաժեշտ գործողությունները (անհրաժեշտության դեպքում նաև՝ Բորսայի անդամի և նրա առևտրային կողմի գրանցումը) կատարվում է սույն գլխի 1) կետում նշված որոշման ընդունման օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ մինչև առևտրային մատչելի սկիզբը:
- 3) Բորսայի անդամի անունից հանդես եկող առևտրի յուրաքանչյուր մասնակցի՝ վերջինիս ներկայությամբ Բորսայի Օպերատորի կողմից շնորհվում է ծածկագիր և գաղտնաբառ, որոնցից յուրաքանչյուրը պետք է բաղկացած լինի նվազագույնը 5 նիշից: Ծածկագիրը և գաղտնաբառը պետք է բաղկացած լինեն միայն լատինական տառերից, թվերից և/կամ հատուկ նշաններից: Առևտրի մասնակցին ծածկագիրը շնորհում և առևտրային համակարգում տվյալ ծածկագիրը գրանցում է Բորսայի Օպերատորի լիազորված աշխատակիցը՝ առևտրի մասնակցի համաձայնությամբ: Առևտրի մասնակցի՝ նվազագույնը 5 նիշերի բարդ համադրություն ներառող գաղտնաբառը գեներացվում է առևտրային համակարգի սերվերի վրա աշխատող համապատասխան ծրագրային մոդուլի միջոցով, ավտոմատ մուտքագրվում է առևտրային համակարգ և տպագրվում: Տպող սարքի մոտ գաղտնաբառի տպագրման ընթացքում գտնվելու և տպագրված գաղտնաբառին ծանոթանալու իրավունք ունի միայն առևտրի մասնակիցը: Եթե առևտրի մասնակիցը գաղտնաբառի ստացման ընթացակարգում գաղտնիության չպահպանման կամ որևէ այլ հիմքով առարկում է գաղտնաբառին, ապա դրա ստացման ընթացակարգը կրկնվում է: Եթե առևտրի մասնակիցը չի առարկում գաղտնաբառին, ապա այն անմիջապես գրանցվում է առևտրային համակարգում, որից հետո առևտրի տվյալ մասնակիցը, իր տերմինալից առևտրային համակարգ մուտքագրելով իրեն շնորհված ծածկագիրը և տվյալ գաղտնաբառը, կարող է մասնակցել բորսայական առևտրին:

- 4) Առևտրի նոր մասնակցին ծածկագիր և գաղտնաբառ շնորհվում է, եթե Բորսայի անդամը սույն կանոնների 2-րդ գլխի 3) կետի գ) և դ) ենթակետերով սահմանված լիազորագիրը և ձևը ներկայացրել է Բորսայի Օպերատորին:
- 5) Գաղտնաբառը մոռանալու դեպքում առևտրի մասնակցի պահանջով նրան տրամադրվում է նոր գաղտնաբառ՝ սույն գլխի 3) կետով սահմանված կարգով:
- 6) Գաղտնաբառը պարտադիր կարգով պետք է փոփոխվի առնվազն 90 (իննսուն) օրը մեկ անգամ: Եթե գաղտնաբառի վերջին փոփոխման ամսաթվին հաջորդող 90-րդ (իննսուններորդ) օրը ներառյալ առևտրի մասնակցի գաղտնաբառը վերջինիս պահանջով չի փոփոխվում սույն գլխի 3) կետով սահմանված կարգով, ապա առևտրի տվյալ մասնակցի մուտքն առևտրային համակարգ արգելափակվում է մինչև վերջինիս կողմից սահմանված կարգով նոր գաղտնաբառի ստացումը:
- 7) Առևտրի մասնակցին տրված լիազորագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առևտրի տվյալ մասնակցի մուտքն առևտրային համակարգ արգելափակվում է մինչև նոր լիազորագրի ներկայացումը, եթե մինչ այդ նոր լիազորագիր չի ներկայացվել: Առևտրի նույն մասնակցին մեկից ավելի լիազորագրերի տրման դեպքում հիմք է ընդունվում վերջին լիազորագիրը:
- 8) Բորսայի անդամի անունից հանդես եկող առևտրի մասնակցի աշխատանքի ազատման կամ սույն կանոնների 2-րդ գլխի 3) կետի դ) ենթակետով սահմանված լիազորագրի գործողության դադարեցման պայմանով այլ աշխատանքի տեղափոխման դեպքում Բորսայի անդամը պարտավոր է անմիջապես, բայց ոչ ուշ, քան փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ մինչև առևտրային նստաշրջանի սկիզբը, այդ մասին տեղեկացնել Բորսայի Օպերատորին սույն կանոնների Հավելված 14-ում նշված օրինակելի ձևին համապատասխան: Ընդ որում՝ չտեղեկացնելու կամ ժամկետի խախտմամբ տեղեկացնելու դեպքում Բորսայի Օպերատորը պատասխանատվություն չի կրում դրա հետևանքով Բորսայի անդամի կամ երրորդ անձի կրած վնասների համար:

**(8-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)**

#### **Գլուխ 5. Առևտրային համակարգին միացումը**

- 1) Հեռացված տերմինալի միջոցով Բորսայի Օպերատորի առևտրային համակարգին միանալու համար՝
  - ա) Բորսայի անդամը պարտավոր է հատկացնել առանձնացված համակարգիչ, որը պետք է ապահովված լինի ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցին կամ ինտերնետին միանալու հնարավորությամբ և բավարարի հետևյալ բավարար պահանջներին՝

<b>Անվանում</b>	<b>Ցուցանիշ</b>
Պրոցեսոր	Pentium 3 կամ 4, 1 ԳՀց
Օպերատիվ հիշողություն	512 ՄԲայտ
Կոշտ սկավառակի վրա ազատ տեղ	100 ՄԲայտ
Տեսաքարտ	1024*768 High color
Մոնիտոր	17 դյույմ
Ցանցային քարտ	Ethernet 10 ՄԲիտ կամ մոդեմ 56.6 Կ
Օպերացիոն համակարգ	Windows Professional 2000/XP, TCP/IP կանխագրերի աջակցում
Անխափան սնուցման աղբյուր	Նվազագույնը 250Վտ հզորություն

- բ) Բորսայի Օպերատորը պարտավոր է Բորսայի անդամի կողմից առանձնացված համակարգչում տեղադրել առևտրային համակարգին հեռացված տերմինալի միջոցով միանալու հնարավորություն տվող ծրագրային մոդուլը, որն ապահովելու է ՍիԲիԷյՆԵթ համակարգչային ցանցի կամ ինտերնետի միջոցով առևտրային համակարգին իրական ժամանակի ռեժիմում միանալու հնարավորությունը, և կատարել դրա փորձարկումը:
- 2) Հեռացված տերմինալի միջոցով առևտրային համակարգին միանալու անհնարինության դեպքում Բորսայի Օպերատորը առևտրային համակարգին միանալու համար Բորսայի անդամի առևտրի մասնակցին տրամադրում է առևտրի սրահ մուտք գործելու անցագիր և առևտրային համակարգին միացված համակարգիչ, որում պետք է տեղադրված լինի առևտրային

համակարգին իրական ժամանակի ռեժիմում միանալու հնարավորություն տվող ծրագրային մոդուլը:

- 3) Բորսայի առևտրային համակարգին լրացուցիչ (մեկից ավելի) հեռացված տերմինալները միացվում են սույն կանոնների Հավելված 12-ին համապատասխան Բորսայի անդամի ներկայացրած դիմումի հիման վրա՝ սույն գլխի 1) և 4) կետերով սահմանված կարգով:  
*(3-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)*
- 4) Սույն գլխի 1) կետի բ) ենթակետում նշված գործընթացը և Բորսայի առևտրային համակարգին միանալու հետ կապված փորձարկումը հաջողությամբ ավարտելուց հետո, Բորսայի և Բորսայի անդամի ներկայացուցիչները ստորագրում են առևտրային համակարգին միանալու վերաբերյալ Ակտ (սույն կանոնների Հավելված 13-ին համապատասխան):  
*(4-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)*

#### **Գլուխ 6. Բորսայի անդամության մերժումը**

- 1) Բորսայի Օպերատորը կարող է մերժել Բորսային անդամագրվելու դիմումը՝ նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը, եթե՝
  - ա) դիմումում պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը ոչ լիարժեք են կամ դրանցում փաստ է խեղաթյուրվել կամ բաց թողնվել,
  - բ) առկա է Օրենքին կամ դրան համապատասխան ընդունված այլ որոշումներին (նորմատիվ իրավական ակտերին) կամ Բորսայի կանոններին որևէ անհամապատասխանություն կամ դրանցով սահմանված մերժման որևէ այլ հիմք,
  - գ) դիմումը ներկայացնելու օրվան նախորդող վեց ամսվա ընթացքում սույն կանոնների 10-րդ գլխի 4) կետով սահմանված կարգով դադարեցվել է դիմորդի անդամությունը Բորսայում:
- 2) Բորսային անդամության դիմումի մերժման մասին որոշումը ստորագրում է Բորսայի Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարը, որի մեկ օրինակը տրամադրվում է դիմորդին այն ստորագրելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

#### **Գլուխ 7. Բորսայի անդամների իրավունքները և պարտականությունները**

- 1) Բորսայի անդամներն իրավունք ունեն՝
  - ա) մասնակցել բորսայական առևտրին Օպերատորի անդամության շնորհման մասին Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ նախատեսված շուկաներում և հարթակներում,  
*(ա) կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)*
  - բ) բորսայական առևտրին մասնակցել Բորսայի Օպերատորի առևտրի սրահում տեղադրված տերմինալներից և/կամ հեռացված տերմինալներից ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով կամ ինտերնետով առևտրային համակարգին իրական ժամանակի ռեժիմում միանալու միջոցով,
  - գ) գրանցել անհրաժեշտ թվով առևտրի մասնակիցներ և դիտորդներ,
  - դ) առաջարկություններ ներկայացնել Բորսայի կանոններում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,
  - ե) Բորսայի անդամի կարգավիճակն օգտագործել գովազդային և այլ նպատակներով,
  - զ) Բորսայի Օպերատորի դիտորդ խորհրդի կողմից սահմանված կարգով Բորսայի Օպերատորի տեղեկատվական բազաներից համապատասխան տեղեկություններ ստանալ, օգտվել Բորսայի Օպերատորին պատկանող տեխնիկական միջոցներից և համակարգերից,
  - է) Բորսայի Օպերատորին դիմել տարբեր հարցումներով՝ կապված բորսայական առևտրի հետ,
  - ը) Բորսայի Օպերատորի մասնագետներից ստանալ խորհրդատվություն առևտրային համակարգից օգտվելու հետ կապված հարցերի վերաբերյալ,
  - թ) Օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և Բորսայի կանոններով սահմանված կարգով բողոքարկել Բորսայի Օպերատորի մարմինների որոշումները,
  - ժ) Բորսայի Օպերատորի քննարկմանը ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ՝ կապված Օպերատորի, նրա մարմինների և Բորսայի անդամների գործունեության հետ,
  - ժա) օգտվել Բորսայի կանոններով սահմանված այլ իրավունքներից:
- 2) Բորսայի անդամները պարտավոր են՝
  - ա) թույլ չտալ Բորսայի անդամության չարաշահում կամ անբարեխիղճ վարքագիծ,

- բ) պահպանել Բորսայի Օպերատորի կողմից սահմանված վարքագծի էթիկայի սկզբունքները, կանոնները և ստանդարտները ինչպես Բորսայի այլ անդամների, այնպես էլ իրենց հաճախորդների կամ պարտատերերի նկատմամբ,
  - գ) պահպանել Օրենքի, Կենտրոնական բանկի որոշումների, Բորսայի կանոնների և իր կողմից ընդունված ներքին կանոնների պահանջները,
  - դ) կատարել Բորսայի Օպերատորի դիտորդ խորհրդի և այլ մարմինների որոշումները,
  - ե) Բորսայի Օպերատորի կողմից վերահսկողության իրականացման համար Օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով և Բորսայի կանոններով նախատեսված սահմաններում և կարգով ապահովել անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը,
  - զ) հեռացված տերմինալը կամ առևտրի սրահում իրեն տրամադրված տերմինալը պահպանել սարքին վիճակում և զերծ պահել համակարգչային վիրուսներից,
  - է) չբազմացնել և երրորդ անձին չփոխանցել Բորսայի Օպերատորի կողմից տրամադրվող ծրագրային ապահովումը,
  - ը) Բորսայի Օպերատորի կողմից տրամադրված ծրագրային ապահովումն օգտագործել միայն Բորսայի կանոնների և Բորսայի Օպերատորի հետ կնքված առևտրային պայմանագրի շրջանակներում,
  - թ) առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգում առկա տեղեկությունները նույն առևտրային նստաշրջանի ընթացքում չիրապարակել կամ այլ ձևով երրորդ անձանց հասանելի չդարձնել,
  - ժ) ապահովել Բորսայի Օպերատորին ներկայացվող տեղեկատվության համապատասխանությունը սույն կանոններով սահմանված ձևերին և պահանջներին,
  - ժա) Բորսայի Օպերատորի պահանջով Օպերատորին տրամադրել լրացուցիչ տեղեկություններ, այդ թվում՝ Բորսայի անդամի նկատմամբ կիրառված պատժամիջոցների և Բորսայի անդամի ֆինանսական վիճակի վերաբերյալ,
  - ժբ) Ժամանակին վճարել անդամավճարները և Բորսայի կանոններով կամ Բորսայի հետ կնքված պայմանագրերով (համաձայնագրերով) սահմանված այլ վճարները:
- 3) Բորսայի անդամներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

**Գլուխ 8. Բորսայի Օպերատորին տեղեկատվության ներկայացման կարգը և պայմանները**

- 1) Սույն կանոնների 2-րդ գլխի 3) կետում (բացառությամբ 2-րդ գլխի 3) կետի թ) ենթակետի) նշված փաստաթղթերում և ձևերում ներառված տեղեկությունների փոփոխության դեպքում այդ փոփոխությունն ուժի մեջ մտնելուց 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Բորսայի անդամը համապատասխան փաստաթղթի փոփոխված տարբերակը կամ փոփոխված տեղեկությունները ներառող ձևը պարտավոր է ներկայացնել Բորսայի Օպերատորին:
- 2) Սույն կանոնների 2-րդ գլխի 3) կետի թ) ենթակետին համապատասխան լրացվող հաշվապահական հաշվեկշռի փոփոխված տարբերակը Բորսայի Օպերատորին է ներկայացվում միայն Բորսայի անդամի կանոնադրական կապիտալի փոփոխության դեպքում:
- 3) Բորսայի անդամն իր որևէ լիցենզիայի կասեցման, լիցենզիայի կասեցման վերացման, լիցենզիայի գործողության դադարեցման կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում պարտավոր է այդ մասին 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Բորսայի Օպերատորին: Ընդ որում՝ չտեղեկացնելու կամ ժամկետի խախտմամբ տեղեկացնելու դեպքում Բորսայի Օպերատորը պատասխանատվություն չի կրում Բորսայի տվյալ անդամի անունից լիազորված առևտրի մասնակցի կողմից Բորսայի կանոնների պահանջների խախտմամբ առևտրային համակարգ մուտքագրված հայտերի և կնքված գործարքների համար:
- 4) Բորսայի անդամը վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշում կայացնելու դեպքում պարտավոր է 10-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Բորսայի Օպերատորին:
- 5) Բորսայի անդամը պարտավոր է սույն կանոնների 7-րդ գլխի 2) կետի ժա) ենթակետով սահմանված պահանջը ստանալու օրվանից պահանջում նշված ժամկետում, իսկ եթե ժամկետը նշված չէ՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, Բորսայի Օպերատորին ներկայացնել պահանջվող տեղեկությունները: Եթե նշված ժամկետները չեն բավարարում պահանջվող տեղեկությունները ներկայացնելու համար, ապա Բորսայի անդամը պետք է բացատրագիր ներկայացնի պահանջվող տեղեկություններն ուշացնելու պատճառների վերաբերյալ:
- 6) Սույն գլխին համապատասխան Բորսայի Օպերատորին տեղեկությունները կարող են ներկայացվել թղթային կրիչով կամ էլեկտրոնային եղանակով՝ ՍիԲիԷՆԵթ համակարգչային

ցանցով: Բորսայի Օպերատորը Բորսայի անդամներին գրություններ, ծանուցումներ և այլն կարող է ուղարկել ինչպես թղթային եղանակով, այնպես էլ ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով:

- 7) ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով ուղարկված փաստաթուղթը պետք է պարտադիր օժտված լինի փաստաթղթի առաքումը և ստացումը հաստատող անդորրագրերը ստանալու հնարավորությամբ, պաշտպանված լինի էլեկտրոնային ստորագրությամբ և ծածկագրումով: ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով ուղարկված փաստաթուղթը վավեր է, եթե այն օժտված է ուղարկող կողմի էլեկտրոնային ստորագրությամբ և ուղարկվել է ստացող կողմի՝ ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցի Լոտուս Դոմինո սերվերում գրանցված իրավասու հասցեով: Իրավասու հասցեն նշվում է Բորսայի Օպերատորի հետ կնքված Առևտրային պայմանագրում և/կամ սույն կանոնների Հավելված 3-ին համապատասխան ներկայացված տեղեկություններում:

### **Գլուխ 9. Առևտրին մասնակցության իրավունքի կասեցումը**

- 1) Բորսայի անդամի՝ Բորսայի Օպերատորի կողմից կազմակերպվող որևէ շուկայում բորսայական առևտրին թույլատրված բոլոր կամ որոշ ֆինանսական գործիքներով առևտրին մասնակցելու իրավունքը կարող է կասեցվել եթե՝
  - ա) Կենտրոնական բանկը որոշում է ընդունել Բորսայի տվյալ անդամի՝ ներդրումային ծառայությունների առանձին տեսակների մատուցման ժամանակավոր սահմանափակման մասին,
  - բ) կասեցվել է Բորսայի անդամի՝ բորսայական առևտրին մասնակցությունը թույլատրող լիցենզիան,
  - գ) Բորսայի տվյալ անդամը խախտել է Օրենքի, այլ նորմատիվ իրավական ակտերի, Բորսայի կանոնների պահանջները, չի կատարել Բորսայի մարմինների պարտադիր կատարման ենթակա որոշումները կամ Բորսայի Օպերատորի նկատմամբ ստանձնած իր պարտավորությունները, որի համար Բորսայի կանոններով սահմանված է տույժ՝ առևտրի իրավունքի կասեցման տեսքով:
- 2) Սույն գլխի 1) կետի ա) կամ բ) ենթակետի հիման վրա բորսայական առևտրին մասնակցության իրավունքը կասեցվում է ներդրումային ծառայության տվյալ տեսակի մատուցման ժամանակավոր սահմանափակման կամ լիցենզիայի կասեցման ժամկետով, բացառությամբ այն դեպքերի, երբ Բորսայի տվյալ անդամը տվյալ պահին ունի տվյալ շուկայում գործառնություններ իրականացնելու այլ լիցենզիա կամ իրավունք:
- 3) Սույն գլխի 1) կետի գ) ենթակետի հիման վրա առևտրի իրավունքի կասեցման վերաբերյալ որոշումն ընդունում է Բորսայի Օպերատորի դիտորդ խորհուրդը, եթե այլ բան սահմանված չէ Բորսայի կանոններով, որի դեպքում առևտրի իրավունքը կասեցված է համարվում որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը:
- 4) Բորսայի անդամը, որի առևտրի իրավունքը կասեցված է, պարտավոր է կատարել Բորսայի Օպերատորի դիտորդ խորհրդի և այլ մարմինների պարտադիր կատարման ենթակա որոշումները և հանձնարարականները:
- 5) Բորսայի այն անդամները, որոնց առևտրի իրավունքը կասեցված է, գրկվում են սույն կանոնների 7-րդ գլխի 1) կետերով (բացառությամբ սույն կանոնների 7-րդ գլխի 1) կետի դ), է), ը), թ) և ժ) ենթակետերի) սահմանված իրավունքներից և պարտավոր են կատարել սույն կանոնների 7-րդ գլխի 2) կետում նշված պարտականությունները:
- 6) Սույն գլխի 1) կետի գ) ենթակետի հիման վրա Բորսայի անդամի առևտրի իրավունքի կասեցումը դադարեցվում է մինչև կասեցման ժամկետի ավարտը Բորսայի տվյալ անդամի դիմումի հիման վրա, եթե վերացել են առևտրի իրավունքի կասեցման հիմքերը:
- 7) Առևտրի իրավունքի կասեցումը դադարեցված է համարվում կասեցման ժամկետը լրանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից:

### **Գլուխ 10. Բորսայի անդամի կարգավիճակի դադարեցումը**

- 1) Բորսայի անդամի կարգավիճակը կարող է կամավոր կամ հարկադիր դադարեցվել կամ ինքնաբերաբար դադարել սույն գլխով սահմանված կարգով:
- 2) Բորսայի անդամի կարգավիճակը կամավոր դադարեցվում է, եթե Բորսայի տվյալ անդամը հրաժարվել է Բորսայի անդամի կարգավիճակից՝ այդ մասին գրավոր դիմելով (տեղեկացնելով) Բորսայի Օպերատորին:

- 3) Բորսայի անդամի կարգավիճակից կամավոր հրաժարվելու դեպքում Բորսայի անդամի կարգավիճակը դադարեցված է համարվում համապատասխան դիմումի ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվանից՝ Բորսայի Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի համապատասխան որոշմամբ:
- 4) Բորսայի անդամի կարգավիճակը կարող է հարկադիր դադարեցվել Բորսայի Օպերատորի դիտորդ խորհրդի որոշմամբ՝ սույն գլխի 5) կետում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայության դեպքում, որի դեպքում Բորսայի անդամի կարգավիճակը դադարեցված է համարվում համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից:
- 5) Բորսայի անդամի կարգավիճակի հարկադիր դադարեցման հիմքերն են՝
  - ա) Օրենքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պարբերական կամ էական, ակնհայտ չարամտությամբ խախտումները,
  - բ) Բորսայի կանոնների պահանջների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը,
  - գ) Բորսայի Օպերատորի նկատմամբ ստանձնած պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը,
  - դ) Բորսայի Օպերատորի կողմից սահմանված մասնագիտական վարքագծի էթիկայի սկզբունքների չպահպանելը կամ դրանց խախտմամբ գործելը,
  - ե) Բորսայի Օպերատորի մարմինների կողմից ընդունված՝ պարտադիր կատարման ենթակա որոշումների չկատարելը:
- 6) Բորսայի անդամի կարգավիճակը հարկադիր դադարեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 7) Բորսայի անդամի կարգավիճակն ինքնաբերաբար դադարում է Բորսայի անդամի՝ բորսայական առևտրին մասնակցությունը թույլատրող լիցենզիան ամբողջությամբ կամ ըստ առանձին ներդրումային ծառայությունների տեսակների ուժը կորցրած ճանաչվելու մասին որոշման ընդունման պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ Բորսայի տվյալ անդամը տվյալ պահին ունի որևէ շուկայում գործառնություններ իրականացնելու այլ լիցենզիա:
- 8) Բորսայի անդամի կարգավիճակի դադարեցման կամ ինքնաբերաբար դադարելու պահից երեսուն օրվա ընթացքում տվյալ կազմակերպությունը պարտավոր է մարել Բորսայի Օպերատորի նկատմամբ իր պարտավորությունները (առկայության դեպքում):

## **Գլուխ 11. Այլ դրույթներ**

- 1) Սույն կանոնները ներառում են նաև հավելվածներ, որոնք հանդիսանում են կանոնների անբաժանելի մասը:
- 2) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով»:  
*(11-րդ գլխի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)*

## **Գլուխ 12. Անցումային դրույթներ**

- ~~1) Սույն կանոնները ներառում են նաև հավելվածներ, որոնք հանդիսանում են կանոնների անբաժանելի մասը:~~
- ~~2) Սույն կանոններն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2009 թվականի մարտի 1-ը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» Բաց Բաժնետիրական Ընկերության անդամ հանդիսացած կազմակերպությունները և Շուկայի մասնակիցները պետք է սույն կանոններով սահմանված կարգով վերագրանցվեն որպես Օպերատորի անդամ կամ Շուկայի մասնակից՝ ներկայացնելով սույն կանոնների 2-րդ գլխով սահմանված այն փաստաթղթերը և տեղեկությունները, որոնք նախկինում Բորսա ներկայացված չեն եղել: Սույն կետում նշված ժամկետում որպես Օպերատորի անդամ կամ Շուկայի մասնակից չվերագրանցված կազմակերպությունների անդամությունը կամ շուկային մասնակցությունը Օպերատորում համարվում է դադարեցված:  
*(12-րդ գլուխը ուժը կորցրած է ճանաչվել և գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)*~~

Հաստատված է  
«ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ  
դիտորդ խորհրդի որոշմամբ

\_\_\_\_\_ Յոհան Ֆրեդիոլմ

«13» հունիսի 2008թ.  
ք. Երևան  
ՀՖԲ-01/102Լ

**«ՆԱՍԴԱՔ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»**  
**Բաց Բաժնետիրական Ընկերություն**

**Դիմում**

Սույնով հայցում եմք \_\_\_\_\_ շնորհել  
(ընկերության անվանումը)

հետևյալ կարգավիճակը՝

Բորսայի անդամ

Շուկայի մասնակից:

Միաժամանակ հավաստում եմք, որ ընդունում եմք Բորսայի կանոնների պահանջները, ինչպես նաև հաստատում եմք «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի որոշումներին և Բորսայի կանոններին համապատասխան գործելու մեր համաձայնությունը:

Գործադիր  
մարմնի ղեկավար՝

\_\_\_\_\_

(պաշտոնը)

\_\_\_\_\_

(անուն, ազգանուն)

\_\_\_\_\_

(ստորագրություն)

Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

**Հավելված 2**

**«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»  
Բաց Բաժնետիրական Ընկերությանը**

**Դիմում**

Սույնով հայցում եմք Բորսայի առևտրային համակարգում \_\_\_\_\_  
(ընկերության անվանումը)

\_\_\_\_\_ իրավունքների խմբում կատարել հետևյալ փոփոխությունները՝

Հարթակի անվանումը	Ավելացնել	Հեռացնել	Ամսաթիվ
Ցուցակված բաժնետոմսերի հարթակ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
Ցուցակված պարտատոմսերի հարթակ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
Ազատ շուկայի գործիքների հարթակ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
Դրամական շուկայի գործիքների հարթակ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
Պետական պարտատոմսերի հարթակ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
Արտարժույթի հարթակ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
Հասցեական գործարքների հարթակ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
Ռեպո գործարքների հարթակ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
Արժեթղթերի տեղաբաշխման հարթակ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
Վարկային ռեսուրսների հարթակ	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

Գործադիր  
մարմնի ղեկավար՝ \_\_\_\_\_ (պաշտոնը) \_\_\_\_\_ (անուն, ազգանուն) \_\_\_\_\_ (ստորագրություն)

Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻՄՈՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**1. Անվանումը**

Լրիվ հայերեն անվանումը, հիմնադիր փաստաթղթերին համապատասխան (առկայության դեպքում՝ նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով)	
Կրճատ հայերեն անվանումը, հիմնադիր փաստաթղթերին համապատասխան (առկայության դեպքում՝ նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով)	

**2. Հասցեն և կապի միջոցները**

Գ-տնվելու վայրը	
Փոստային հասցեն (գործունեության վայրը)	
Հեռախոս	
Ֆաքս	
Էլեկտրոնային փոստ	
ՍԻԲԻԷՆԵՑ համակարգչային ցանցի իրավասու էլեկտրոնային հասցե	
Ինտերնետային կայքի հասցե	
Հեռացված տերմինալի IP հասցե	

**3. Գրանցումը**

Գրանցման երկիրը	
Գրանցման համարը և ամսաթիվը (օր/ամիս/տարի)	

**4. Գործունեության լիցենզիա**

*(նշել լիցենզիայի տեսակը, համարը և տրման ամսաթիվը, ում կողմից է տրված և լիցենզիայով թույլատրված գործունեության տեսակները)*

1.	
2.	
..	

**5. Տեղեկություններ Դիմորդի ղեկավարների և պատասխանատու աշխատակիցների վերաբերյալ**

*(նշել տեղեկություններ դիմորդի գործադիր մարմնի ղեկավարի և տեղակալների (գործադիր մարմնի անդամների), (օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության դեպքում՝ մասնաճյուղի կամ ներկայացուցչության ղեկավարի), գլխավոր հաշվապահի, ներքին աուդիտորի, բորսայական առևտրին մասնակցելու համար լիազորված ստորաբաժանումների ղեկավարների, տեղեկատվական տեխնոլոգիաների և առևտրային համակարգի ծրագրային մոդուլների անվտանգությունն ապահովող պատասխանատու աշխատակիցների վերաբերյալ)*

N	անունը, ազգանունը	դիմորդի կազմում զբաղեցրած պաշտոնը և այդ պաշտոնում աշխատանքի ընդունման ամսաթիվը	մասնագիտական որակավորման հավաստագր(եր)ի սերիան, համարը և տրման ամսաթիվը (առկայության դեպքում)	կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ)
1.				
2.				
..				

**6. Տեղեկություններ ձայնի իրավունք տվող դիմորդի բաժնային արժեթղթերի 5 (հինգ) և ավելի տոկոսի սեփականատերերի վերաբերյալ՝ իրավաբանական անձանց համար**

N	ֆիրմային անվանումը	գտնվելու վայրը, փոստային հասցեն	գրանցման երկիրը, գրանցման համարը և ամսաթիվը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ, ինտերնետային կայքի հասցե)	բաժնետոմսերի (բաժնեմասի) քանակը և տեսակարար կշիռը
1.				
2.				
..				

**7. Տեղեկություններ ձայնի իրավունք տվող դիմորդի բաժնային արժեթղթերի 5 (հինգ) և ավելի տոկոսի բաժնետերերի վերաբերյալ՝ ֆիզիկական անձանց համար**

N	անունը, ազգանունը	անձնագրի սերիան և համարը	բնակության վայրը և կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ)	բաժնետոմսերի (բաժնեմասի) քանակը և տեսակարար կշիռը
1.				
2.				
..				

**8. Տեղեկություններ ներդրումային ընկերության, բանկի, վարկային կազմակերպության, ապահովագրական ընկերության կամ բորսայական առևտրին թույլատրված այն արժեթղթերի թողարկողների վերաբերյալ, որոնցում դիմորդը ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի 5 (հինգ) և ավելի տոկոսի սեփականատեր է**

N	Ֆիրմային անվանումը	գտնվելու վայրը, փոստային հասցեն	գրանցման երկիրը, գրանցման համարը և ամսաթիվը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ, ինտերնետային կայքի հասցե)	բաժնետոմսերի (բաժնեմասի) քանակը և տեսակարար կշիռը
1.				
2.				
..				

**9. Տեղեկություններ այլ կազմակերպությունների վերաբերյալ, որոնց դիմորդն անդամակցում է**

N	անվանումը	գտնվելու վայրը, փոստային հասցեն	գրանցման երկիրը, գրանցման համարը և ամսաթիվը, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ, ինտերնետային կայքի հասցե)	անդամության ամսաթիվը (օր/ամիս/տարի)
1.				
2.				
..				

Գործադիր  
մարմնի ղեկավար՝

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

լուսանկար  
(3x4 սմ)

**Տեղեկություններ Առևտրի մասնակցի վերաբերյալ**

Առևտրի մասնակցի անունը, ազգանունը և հայրանունը		
Գիմորդի կազմում առևտրի մասնակցի զբաղեցրած պաշտոնը		
Առևտրի մասնակցի անձնագրի տվյալները (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)		
Առևտրի մասնակցի ծննդյան ամսաթիվը, ծննդավայրը, քաղաքացիությունը		
Առևտրի մասնակցի մասնագիտական որակավորման հավաստագր(եր)ի սերիան, համարը , տրման ամսաթիվը և ժամկետի ավարտը (առկայության դեպքում)		
Կապի միջոցներ	հեռախոս	
	ֆաքս	
	Էլեկտրոնային փոստ	
	ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցի էլեկտրոնային հասցե	
	այլ	
Առևտրի մասնակցի ստորագրության նմուշը		

Գործադիր  
մարմնի ղեկավար՝

\_\_\_\_\_ (պաշտոնը)

\_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

**ԼԻԱԶՈՐԱԳԻՐ**

\_\_\_\_\_ (լիազորագրի տրման վայրը)

\_\_\_\_\_ (լիազորագրի տրման ամսաթիվը)

Սույն լիազորագրով \_\_\_\_\_ (ընկերության անվանումը)

(այսուհետ՝ Ընկերություն) իր աշխատակից \_\_\_\_\_-ին (անուն, ազգանուն)

(անձնագիր՝ \_\_\_\_\_, տրված «\_\_\_\_\_» \_\_\_\_\_ թ.-ին \_\_\_\_\_-ի կողմից) լիազորում է՝

- 1) Հայաստանի Ֆոնդային Բորսայում (այսուհետ՝ Օպերատոր) հանդես գալու որպես Ընկերության առևտրի մասնակից՝ հետևյալ իրավունքներով՝

Ընկերության միջոցների ապադեպոնացումների կատարում	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
Մասնակցություն ցուցակված բաժնետոմսերի հարթակում <i>(եթե այո, ապա նշել հետևյալ իրավունքներից որևէ մեկը)</i> <input type="checkbox"/> գործարքների կնքում <input type="checkbox"/> դիտորդ <sup>1</sup>	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
Մասնակցություն ցուցակված պարտատոմսերի հարթակում <i>(եթե այո, ապա նշել հետևյալ իրավունքներից որևէ մեկը)</i> <input type="checkbox"/> գործարքների կնքում <input type="checkbox"/> դիտորդ <sup>1</sup>	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
Մասնակցություն ազատ շուկայի գործիքների հարթակում <i>(եթե այո, ապա նշել հետևյալ իրավունքներից որևէ մեկը)</i> <input type="checkbox"/> գործարքների կնքում <input type="checkbox"/> դիտորդ <sup>1</sup>	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
Մասնակցություն դրամական շուկայի գործիքների հարթակում <i>(եթե այո, ապա նշել հետևյալ իրավունքներից որևէ մեկը)</i> <input type="checkbox"/> գործարքների կնքում <input type="checkbox"/> դիտորդ <sup>1</sup>	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
Մասնակցություն պետական պարտատոմսերի հարթակում <i>(եթե այո, ապա նշել հետևյալ իրավունքներից որևէ մեկը)</i> <input type="checkbox"/> գործարքների կնքում <input type="checkbox"/> դիտորդ <sup>1</sup>	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
Մասնակցություն արտարժույթի հարթակում <i>(եթե այո, ապա նշել հետևյալ իրավունքներից որևէ մեկը)</i> <input type="checkbox"/> գործարքների կնքում <input type="checkbox"/> դիտորդ <sup>1</sup>	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
Մասնակցություն հասցեական գործարքների հարթակում <i>(եթե այո, ապա նշել հետևյալ իրավունքներից որևէ մեկը)</i> <input type="checkbox"/> գործարքների կնքում <input type="checkbox"/> դիտորդ <sup>1</sup>	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ

<sup>1</sup> Այս իրավունքը շնորհելու դեպքում առևտրի մասնակիցը հնարավորություն է ունենալու տարբերակել այն հայտերը, որոնք մուտքագրվել են տվյալ գործիքով գործարքներ կնքելու իրավունք ունեցող՝ նույն կազմակերպության առևտրի այլ մասնակիցների կողմից:

<input type="checkbox"/> գործարքների կնքում <input type="checkbox"/> դիտորդ <sup>1</sup>	
Մասնակցություն ռեպո գործարքների հարթակում <i>(եթե այո, ապա նշել հետևյալ իրավունքներից որևէ մեկը)</i>	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
<input type="checkbox"/> գործարքների կնքում <input type="checkbox"/> դիտորդ <sup>1</sup>	
Մասնակցություն արժեթղթերի տեղաբաշխման հարթակում <i>(եթե այո, ապա նշել հետևյալ իրավունքներից որևէ մեկը)</i>	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
<input type="checkbox"/> գործարքների կնքում <input type="checkbox"/> դիտորդ <sup>1</sup>	
Մասնակցություն այլ (նշել) հարթակում <i>(եթե այո, ապա նշել հետևյալ իրավունքներից որևէ մեկը)</i>	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
<input type="checkbox"/> գործարքների կնքում <input type="checkbox"/> դիտորդ <sup>1</sup>	

- 2) ստանալու Օպերատորի կողմից Ընկերության առևտրի մասնակցին տրամադրվող՝ առևտրային համակարգ մուտք գործելու ծածկագիրը և գաղտնաբառը,
- 3) բորսայական առևտրին մասնակցելու Օպերատորի առևտրի սրահում տեղադրված և Ընկերության հեռացված տերմինալների միջոցով,
- 4) Օպերատորից ստանալու Ընկերության կողմից բորսայական առևտրի ընթացքում կնքված գործարքների գրանցման վկայականների թղթային օրինակները,

ինչպես նաև կատարելու սույն լիազորության հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Սույն լիազորագիրը տրված է մինչև « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.-ը գործողության ժամկետով:

Գործադիր  
մարմնի ղեկավար՝ \_\_\_\_\_ (պաշտոնը) \_\_\_\_\_ (անուն, ազգանուն) \_\_\_\_\_ (ստորագրություն)

Կ.Տ.

Տեղեկություններ Դիտորդի վերաբերյալ

Դիտորդի անունը, ազգանունը և հայրանունը		
Դիտորդի կազմում զբաղեցրած պաշտոնը		
Անձնագրի տվյալները (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)		
Կապի միջոցներ	հեռախոս	
	ֆաքս	
	Էլեկտրոնային փոստ	
	ՍիԲիԷՆՆԵՔ համակարգչային ցանցի էլեկտրոնային հասցե	
	այլ	
Հեռացված դիտորդի տերմինալի IP հասցե		
Դիտարկվող հարթակները	ցուցակված բաժնետոմսերի հարթակ	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
	ցուցակված պարտատոմսերի հարթակ	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
	ազատ շուկայի գործիքների հարթակ	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
	դրամական շուկայի գործիքների հարթակ	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
	պետական պարտատոմսերի հարթակ	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
	արտարժույթի հարթակ	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
	հասցեական գործարքների հարթակ	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
	ռեպո գործարքների հարթակ	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
	արժեթղթերի տեղաբաշխման հարթակ	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
	այլ (նշել)	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ
Դիտորդի իրավասությունները	դիտարկվող հարթակներում Դիտորդի սեփական հայտերը և կնքված գործարքները տարբերակելու իրավասությամբ	<input type="checkbox"/> այո <input type="checkbox"/> ոչ

Գործադիր մարմնի ղեկավար՝

\_\_\_\_\_ (պաշտոնը)

\_\_\_\_\_ (անուն, ազգանուն)

\_\_\_\_\_ (ստորագրություն)

Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

Տեղեկություններ իրավասու հաշիվների վերաբերյալ

Հաշվի տեսակը	Հաշիվը վարող բանկի անվանումը	Հաշվի համարը	Արժույթ
ՀՀ դրամով սեփական իրավասու հաշիվ			AMD
ՀՀ դրամով ամփոփ հաճախորդների իրավասու հաշիվ			AMD

Հաշվի տեսակը*	Հաշիվը վարող բանկի անվանումը	Հաշվի համարը	Արժույթ
ԱՄՆ դոլարով սեփական իրավասու հաշիվ			USD
ԱՄՆ դոլարով ամփոփ հաճախորդների իրավասու հաշիվ			USD
Եվրոյով սեփական իրավասու հաշիվ			EUR
Եվրոյով ամփոփ հաճախորդների իրավասու հաշիվ			EUR

\* Լրացվում է արտարժույթի բորսայական առևտրին մասնակցելու համար

Հաշվի տեսակը**	Հաշիվը վարող ենթապահառուի անվանումը	Հաշվի համարը
Սեփական դեպո իրավասու հաշիվ		
Ամփոփ հաճախորդների դեպո իրավասու հաշիվ		

\*\* Լրացվում է պետական պարտատոմսերի բորսայական առևտրին մասնակցելու համար

Գործադիր  
մարմնի ղեկավար՝

(պաշտոնը)

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.



**ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ կենտրոնական բանկում վարվող սեփական հաշիվներից միջոցներ գանձելու իրավունք վերապահելու մասին**

1. Սույնով \_\_\_\_\_ (Հաշվարկային գործակալի անվանումը)

(այսուհետ՝ Հաշվարկային գործակալ) տալիս է իր համաձայնությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում վարվող իր հաշիվներից միջոցներ գանձելու իրավունքը «ՆԱՍԳԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց Բաժնետիրական Ընկերությանը (այսուհետ՝ Բորսա) վերապահելու մասին՝ սույն Համաձայնության մեջ նշված պայմաններով:

2. Սույն Համաձայնությունը տրվում է \_\_\_\_\_-ի (անվանումը)

(այսուհետ՝ Մասնակից) Հաշվարկային գործակալի մոտ վարվող իրավասու հաշիվներին Բորսայի հաշիվներից կատարված փոխանցումների ճշգրտումներ կատարելու նպատակով՝ Բորսայի «Պետական պարտատոմսերի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնների» 7-րդ գլխի 10) և 11) կետերում, Բորսայի «Արտարժույթի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնների» 7-րդ գլխի 10) և 11) կետերում, ինչպես նաև Բորսայի «Վարկային ռեսուրսների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնների» 7-րդ գլխի 10) և 11) կետերում նշված դեպքերում և չափով:»:

*(2-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)*

3. Հաշվարկային գործակալը վարում է Մասնակցի հետևյալ իրավասու հաշիվները՝

ՀՀ դրամով սեփական հաշիվ	
ՀՀ դրամով ամփոփ հաճախ. հաշիվ	
ԱՄՆ դոլարով սեփական հաշիվ	
ԱՄՆ դոլարով ամփոփ հաճախ. հաշիվ	
Եվրոյով սեփական հաշիվ	
Եվրոյով ամփոփ հաճախ. հաշիվ	
Դեպո սեփական հաշիվ	
Դեպո ամփոփ հաճախ. հաշիվ	

4. Բորսային տրված գանձման իրավունքը տարածվում է ՀՀ կենտրոնական բանկում Հաշվարկային գործակալի հետևյալ հաշիվների վրա՝

ՀՀ դրամով սեփական հաշիվ	
ԱՄՆ դոլարով սեփական հաշիվ	
Եվրոյով սեփական հաշիվ	
Դեպո սեփական հաշիվ	
Դեպո ամփոփ հաճախ. հաշիվ	

5. Բորսայի կողմից Հաշվարկային գործակալի հաշիվներից տվյալ օրը գանձվող միջոցների գումարը (ծավալը) չի կարող գերազանցել Բորսայի հաշիվներից Հաշվարկային գործակալի մոտ վարվող Մասնակցի հաշիվներին մույն օրվա ընթացքում փոխանցված միջոցների գումարի (ծավալի) չափը:

Գործադիր  
մարմնի ղեկավար՝ \_\_\_\_\_ (պաշտոնը) \_\_\_\_\_ (անուն, ազգանուն) \_\_\_\_\_ (ստորագրություն)

Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

**ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ**  
**ՀՀ կենտրոնական բանկում վարվող սեփական հաշվից միջոցներ գանձելու իրավունք**  
**վերապահելու մասին**

1. Սույնով \_\_\_\_\_  
(ընկերության անվանումը)

(այսուհետ՝ Մասնակից) տալիս է իր համաձայնությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում վարվող իր դրամային \_\_\_\_\_ քրթակցային հաշվից միջոցներ գանձելու իրավունքը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին վերապահելու մասին՝ սույն Համաձայնության մեջ նշված պայմաններով:

2. Սույն Համաձայնությունը տրվում է վարկային ռեսուրսներով Մասնակցի կողմից կնքված գործարքների վերջնահաշվարկն ու մարումն ապահովելու նպատակով՝ Օպերատորի «Վարկային ռեսուրսների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնների» 7-րդ գլխի 12) կետում և 8-րդ գլխի 3) և 4) կետերում նշված դեպքերում և չավիով:

Գործադիր  
մարմնի ղեկավար՝

\_\_\_\_\_

(պաշտոնը)

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

**(10-րդ հավելվածի լրացումը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)**

**ՀԱՍՏԱՏՈՒՄ**

**Մասնակցի կողմից ՀՀ կենտրոնական բանկում վարվող սեփական հաշվից միջոցներ գանձելու  
իրավունքը ՀՀ կենտրոնական բանկին վերապահված լինելու մասին**

1. Սույնով ՀՀ կենտրոնական բանկը հաստատում է, որ \_\_\_\_\_  
(ընկերության անվանումը)

(այսուհետ՝ Մասնակից) տվել է իր համաձայնությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական  
բանկում վարվող իր դրամային \_\_\_\_\_ թղթակցային հաշվից միջոցներ գանձելու  
իրավունքը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին վերապահելու մասին:

Լիազորված  
ներկայացուցիչ՝

\_\_\_\_\_

(պաշտոնը)

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ. »:

**(11-րդ հավելվածի լրացումը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)**

**«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»  
Բաց Բաժնետիրական Ընկերությանը**

**Դիմում**

**ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱՅԻ առևտրային համակարգում  
լրացուցիչ հեռացված տերմինալի գրանցման մասին**

Սույնով հայցում եմք ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱՅԻ առևտրային համակարգում գրանցել  
\_\_\_\_\_ լրացուցիչ \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) հատ  
(ընկերության անվանումը)

հեռացված տերմինալ, ընդ որում՝

առևտրին մասնակցելու իրավունքով՝ \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) հատ,

դիտորդի կարգավիճակով՝ \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) հատ:

Գործադիր  
մարմնի ղեկավար՝

\_\_\_\_\_ (պաշտոնը)      \_\_\_\_\_ (անուն, ազգանուն)      \_\_\_\_\_ (ստորագրություն)

Կ.Տ.

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ թ.

**(12-րդ հավելվածի փոփոխությունները գրանցված են ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)**

**Ակտ**

**առևտրային համակարգին միանալու վերաբերյալ**

**ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ** (այսուհետ նաև՝ Բորսա), ի դեմս \_\_\_\_\_, որը գործում է Օպերատորի Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և \_\_\_\_\_ (այսուհետ նաև՝ Մասնակից), ի դեմս \_\_\_\_\_, որը գործում է Մասնակցի Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից ստորագրեցին սույն ակտը հետևյալի մասին.

1. Մասնակիցը հատկացրել է առանձնացված համակարգիչ (գործարանային համար՝ \_\_\_\_\_, օբյեկտի անվանում՝ \_\_\_\_\_), որն ապահովված է \_\_\_\_\_-ին միանալու հնարավորությամբ և բավարարում է հետևյալ չափանիշներին՝

Անվանում	Բավարար ցուցանիշ	Նշումներ
Պրոցեսոր	Pentium 3 կամ 4, 1 Գ-Հց	
Օպերատիվ հիշողություն	512 ՄԲայտ	
Կոշտ սկավառակի վրա ազատ տեղ	100 ՄԲայտ	
Տեսաքարտ	1024*768 High color	
Մոնիտոր	17 դյույմ	
Ցանցային քարտ	Ethernet 10 ՄԲիտ կամ մոդեմ 56,6 Կ	
Օպերացիոն համակարգ	Windows Professional 2000/XP, TCP/IP կանխագրերի աջակցում	
Անխափան սնուցման աղբյուր	Նվազագույնը 250Վտ հզորություն	

2. Բորսան Մասնակցի կողմից առանձնացված համակարգչում տեղադրել է առևտրային համակարգին հեռացված տերմինալի միջոցով միանալու հնարավորություն տվող ծրագրային մոդուլը,
3. Օպերատորի և Մասնակցի ներկայացուցիչները հաջողությամբ փորձարկել են հեռացված տերմինալի միջոցով առևտրային համակարգին միանալու հնարավորությունը,
4. Սույն Ակտի 1 - 3 կետերում նշված գործողությունների արդյունքում հեռացված տերմինալի և առևտրային համակարգի միջև հաստատվեց կապ, ինչը հավաստում է հեռացված տերմինալի պատշաճ աշխատունակությունը:

**Բորսա**  
«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»  
Բաց Բաժնետիրական Ընկերություն

**Մասնակից**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Սկրտչյան 5ք

Հասցե՝

« » 20 թ.

« » 20 թ.

Կ.Տ.

Կ.Տ.

*(13-րդ հավելվածի փոփոխությունները գրանցված են ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)*

**ՏԵՂԵԿԱՑՈՒՄ  
ԼԻԱԶՈՐԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Սույնով \_\_\_\_\_  
(ընկերության անվանումը)

(այսուհետ՝ Ընկերություն) տեղեկացնում է, որ դադարեցնում է Ընկերության կողմից «\_\_\_»  
\_\_\_\_\_.թ.-ին \_\_\_\_\_-ին տրված և Օպերատորի  
Օպերատորին  
(անուն, ազգանուն)

ներկայացված լիազորագրի գործողությունը:

Խնդրում ենք «\_\_\_» \_\_\_\_\_ .թ.-ից դադարեցնել Ընկերության առևտրի մասնակից  
\_\_\_\_\_-ին նշված լիազորագրով վերապահված բոլոր իրավունքները:  
(անուն, ազգանուն)

Գործադիր  
մարմնի ղեկավար՝ \_\_\_\_\_  
(պաշտոնը) \_\_\_\_\_ (անուն, ազգանուն) \_\_\_\_\_  
(ստորագրություն)

Կ.Տ.

« \_\_\_ » \_\_\_\_\_ .թ.

**(14-րդ հավելվածի փոփոխությունները գրանցված են ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)**

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ □ \_\_\_ / - \_\_\_ / \_\_\_

«ՆԱՍԴԱԸ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում կազմակերպվող առևտրին մասնակցության մասին

ք. Երևան

« \_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

«ՆԱՍԴԱԸ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց Բաժնետիրական Ընկերությունը (այսուհետ՝ նաև՝ Օպերատոր), ի դեմս \_\_\_\_\_, որը գործում է Օպերատորի Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և \_\_\_\_\_ (այսուհետ՝ Մասնակից), ի դեմս \_\_\_\_\_, որը գործում է Մասնակցի Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) կանոնակարգվում են Մասնակցի կողմից Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին մասնակցության կապակցությամբ Օպերատորի և Մասնակցի միջև ծագող հարաբերությունները՝ սահմանելով վերջիններիս քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները:

2. Պայմանագրում օգտագործվող հասկացությունները

Եթե Պայմանագրով այլ բան սահմանված չէ, ապա Պայմանագրում օգտագործվող հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված նշանակությունները:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Սույն Պայմանագրի շրջանակներում Մասնակիցը պարտավոր է՝

- ա) պահպանել Օպերատորի կանոններով և սույն Պայմանագրով սահմանված պահանջները,
- բ) թույլ չտալ Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին մասնակցության իրավունքի չարաշահում և անբարեխիղճ վարքագիծ,
- գ) որևէ շուկայում և/կամ հարթակում Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին մասնակցության իրավունքն ապահովող լիցենզիայի գործողության կասեցման կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում այդ մասին 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Օպերատորին,
- դ) հեռացված տերմինալը կամ առևտրի սրահում իրեն տրամադրված տերմինալը պահպանել սարքին վիճակում և զերծ պահել համակարգչային վիրուսներից,
- ե) չբազմացնել և երրորդ անձին չփոխանցել Օպերատորի կողմից տրամադրվող ծրագրային ապահովումը,
- զ) առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգում առկա տեղեկությունները նույն առևտրային նստաշրջանի ընթացքում չհրապարակել կամ այլ ձևով երրորդ անձանց հասանելի չդարձնել,
- է) Օպերատորի կողմից տրամադրված ծրագրային ապահովումն օգտագործել միայն Օպերատորի կանոնների և սույն Պայմանագրի առարկայի շրջանակներում,
- ը) անմիջապես Օպերատորին տեղեկացնել առևտրային համակարգին միանալու համար նախատեսված ծրագրային մոդուլի վնասման մասին,
- թ) Օպերատորի կանոններին համապատասխան իրեն հասանելի տեղեկատվության հիման վրա ստուգել վերջնահաշվարկի արդյունքների հավաստիությունը և անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում Օպերատորի կանոններով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում տեղեկացնել Օպերատորին և ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցներն անհամապատասխանությունները շտկելու ուղղությամբ,
- ժ) պատշաճ կերպով սույն Պայմանագրով և Օպերատորի կանոններով սահմանված կարգով վճարել միջոցազրկումները և այլ վճարները,
- ժա) վարկային ռեսուրսների շուկայում առևտրին մասնակցելու համար Հաշվարկային բանկում վարվող իր դրամային հաշվից համապատասխան միջոցների գանձման իրավունքը վերապահել Հաշվարկային բանկին Օպերատորի «Անդամակցության և շուկային մասնակցության կանոնների» 10-րդ Հավելվածով սահմանված օրինակելի ձևին համապատասխան՝ միաժամանակ Օպերատորին ներկայացնելով նաև այդ մասին Հաշվարկային բանկից

ստացված հաստատումը՝ Օպերատորի «Անդամակցության և շուկային մասնակցության կանոնների» 11-րդ Հավելվածով սահմանված օրինակելի ձևին համապատասխան:

**(ժա) ենթակետի լրացումը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)**

3.2. Սույն Պայմանագրի շրջանակներում Մասնակիցն իրավունք ունի՝

- ա) իր առևտրի մասնակիցների միջոցով իրական ժամանակի ռեժիմում մասնակցել Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին,
- բ) Օպերատորի կանոններով սահմանված կարգով Օպերատորի քննարկմանը ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ՝ կապված Օպերատորի, նրա մարմինների և անդամների գործունեության հետ,
- գ) առաջարկություններ ներկայացնել Օպերատորի կանոններում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,
- դ) Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին մասնակցության իրավունքն օգտագործել գովազդային և այլ նպատակներով,
- ե) Օպերատորի կանոններով և սույն Պայմանագրով սահմանված կարգով Օպերատորի տեղեկատվական բազաներից համապատասխան տեղեկություններ ստանալ, օգտվել Օպերատորին պատկանող տեխնիկական միջոցներից և համակարգերից,
- զ) Օպերատորին դիմել տարբեր հարցումներով՝ կապված Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրի հետ,
- է) Օպերատորի մասնագետներից ստանալ խորհրդատվություն առևտրային համակարգի ծրագրային մոդուլի, ինչպես նաև անհրաժեշտ ծրագրային ապահովման տեղադրման և համալրման վերաբերյալ,
- ը) առևտրային համակարգին միանալու համար նախատեսված ծրագրային մոդուլի վնասման դեպքում այդ մասին Օպերատորին տեղեկացնելուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորից պահանջել տվյալ ծրագրային մոդուլի կրկնակի տեղադրում՝ Օպերատորին վճարելով Օպերատորի կանոններով սահմանված վճարը,
- թ) վերջնահաշվարկի արդյունքում իր իրավասու հաշիվներին փաստացի փոխանցված միջոցները Օպերատորից ստացված գործարքների գրանցման վկայականում պարունակվող տվյալներին չհամապատասխանելու դեպքում անհրաժեշտ ճշգրտումներ պահանջել Օպերատորից,
- ժ) օգտվել ՀՀ օրենսդրությամբ, Օպերատորի կանոններով և սույն Պայմանագրով սահմանված այլ իրավունքներից:

3.3. Սույն Պայմանագրի շրջանակներում Օպերատորը պարտավոր է՝

- ա) կատարել Օպերատորի կանոններով և սույն Պայմանագրով սահմանված պահանջները,
- բ) Մասնակցի կողմից Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին մասնակցելու համար դեպոնացված միջոցներն օգտագործել բացառապես Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրի սպասարկման և Մասնակցի պարտավորությունների կատարման համար,
- գ) խորհրդատվությամբ ապահովել Մասնակցին առևտրային համակարգից օգտվելու հետ կապված հարցերի վերաբերյալ,
- դ) ապահովել առևտրային համակարգ մուտքագրված հայտերի և այլ տեղեկությունների գաղտնիությունը դրանց ստացման իրավասություն չունեցող անձանցից,
- ե) Մասնակցի անունից հանդես եկող առևտրի յուրաքանչյուր մասնակցի Օպերատորի կանոններով սահմանված դեպքերում և կարգով շնորհել ծածկագիր և գաղտնաբառ,
- զ) Մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակցի կողմից կատարված՝ սույն Պայմանագրով և/կամ Օպերատորի կանոններով սահմանված պահանջների խախտման հայտնաբերման դեպքում այդ մասին Օպերատորի կանոններով սահմանված կարգով տեղեկացնել Մասնակցին,
- է) ապահովել Մասնակցին Օպերատորի կանոններով և սույն Պայմանագրով սահմանված տեղեկատվության ժամանակին և պատշաճ կերպով տրամադրումը,
- ը) սույն Պայմանագրի 3.2 կետի ը) ենթակետում նշված պահանջը ստանալուց հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում ապահովել առևտրային համակարգին միանալու համար նախատեսված ծրագրային մոդուլի կրկնակի տեղադրումը՝ Մասնակցին ներկայացնելով Օպերատորի կանոններով սահմանված վճարի հաշիվը,
- թ) առևտրային մատչելի հետաձգման, ընդմիջման, վերսկսման կամ դադարեցման դեպքում այդ մասին առևտրային համակարգի միջոցով կամ Մասնակցի կողմից Օպերատորին տրամադրված տեղեկություններում նշված կապի այլ միջոցներով անհապաղ, բայց ոչ ուշ քան 15 (տասնհինգ) րոպեի ընթացքում տեղեկացնել Մասնակցին,
- ժ) վերջնահաշվարկի ընթացքում անհամապատասխանությունների մասին Մասնակցից ահազանգ ստանալու դեպքում Օպերատորի կանոններով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում այդ մասին տեղեկացնել Հաշվարկային բանկին, խնդրելով հետաձգել Հաշվարկային բանկի գործառնական օրվա փակումը, համապատասխան Հաշվարկային գործակալին

(անհրաժեշտության դեպքում) և միաժամանակ Մասնակցի հետ միասին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները անհամապատասխանությունների պատճառները հայտնաբերելու և սահմանված կարգով վերացնելու ուղղությամբ:

- 3.4. Սույն Պայմանագրի շրջանակներում Օպերատորն իրավունք ունի՝
- ա) իրականացնել առևտրային համակարգի ծրագրային ապահովման փոխարինում՝ Մասնակցին նոր տարբերակներ փոխանցելով,
  - բ) Մասնակցի կողմից սույն Պայմանագրի պայմանները և/կամ Օպերատորի կանոնների պահանջները խախտելու դեպքում կասեցնել Մասնակցի՝ Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին մասնակցելու իրավունքը, հեռացված տերմինալը ժամանակավորապես անջատել Օպերատորի առևտրային համակարգից և/կամ կիրառել սույն Պայմանագրով և Օպերատորի կանոններով սահմանված այլ պատժամիջոցներ,
  - գ) Օպերատորի կանոններով սահմանված դեպքերում և Մասնակցի կողմից ներկայացված Համաձայնության շրջանակներում օգտվել Մասնակցի (Մասնակցի Հաշվարկային գործակալի) հաշվվներից միջոցների գանձման իր իրավունքից,
  - դ) Մասնակցի մեղքով Օպերատորի առևտրային համակարգի բնականոն աշխատանքին սպառնացող որևէ վտանգի դեպքում Մասնակցի հեռացված տերմինալը ժամանակավորապես անջատել առևտրային համակարգից՝ մինչև խնդրի լուծումը,
  - ե) օգտվել ՀՀ օրենսդրությամբ, Օպերատորի կանոններով և սույն Պայմանագրով սահմանված այլ իրավունքներից:
- 3.5. Սույն Պայմանագրի շրջանակներում Կողմերը պարտավոր են ՍիԲիԷՆՆԵՑ համակարգչային ցանցով փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացումը մյուս Կողմին իրականացնել միայն վերջինիս իրավասու էլեկտրոնային հասցեով:

#### **4. Պատասխանատվությունը**

- 4.1. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Մասնակցի կողմից Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին մասնակցության համար լիազորված առևտրի մասնակցի կողմից Օպերատորի կանոնների պահանջների խախտմամբ առևտրային համակարգ մուտքագրված հայտերի և կնքված գործարքների համար:
- 4.2. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Մասնակցի կողմից Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին հեռացված տերմինալի միջոցով մասնակցության խախտման այն դեպքերի համար, որոնք տեղի են ունեցել Մասնակցի կողմից Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին հեռացված տերմինալի միջոցով մասնակցելու համար հատկացված համակարգչի ցուցանիշները Օպերատորի կողմից սահմանված պահանջներից ցածր լինելու պատճառով:
- 4.3. Սույն Պայմանագրով Օպերատորի կանոններով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ, Օպերատորի կանոններով և սույն Պայմանագրով սահմանված կարգով:
- 4.4. Մասնակցիցը պատասխանատվություն է կրում առևտրային համակարգ մուտքագրված հայտերի և այլ տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:
- 4.5. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Մասնակցի կորուստների համար, որոնք առաջացել են Մասնակցի անուհից հանդես եկող առևտրի մասնակցին տրված ծածկագրով և գաղտնաբառով առևտրային համակարգ համապատասխան լիազորություններ չունեցող կամ երրորդ անձանց չարտոնված մուտքի պատճառով:
- 4.6. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Մասնակցի կորուստների համար, որոնք առաջացել են Հաշվարկային գործակալի գործողությունների արդյունքում:
- 4.7. Օպերատորը և Մասնակցիցը պատասխանատվություն են կրում և պարտավոր են փոխհատուցել իրենց կողմից Օպերատորի կանոնների կամ սույն Պայմանագրի դրույթների խախտման հետևանքով մյուս Կողմին պատճառված իրական վնասները:
- 4.8. Կողմերը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հրապարակելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 4.9. Կողմը, որը փաստաթղթերի և/կամ տեղեկատվության առաքումն իրականացրել է ոչ իրավասու էլեկտրոնային հասցեից կամ ոչ իրավասու էլեկտրոնային հասցեին կամ չի իրականացրել ընդհանրապես՝ պատասխանատու է դրա հետևանքով առաջացած իրական վնասների համար:
- 4.10. Կողմերից մեկի գործողության կամ անգործության հետևանքով սույն Պայմանագրի որևէ դրույթի խախտումը մյուս Կողմին իրավունք չի վերապահում ձեռնարկելու սույն Պայմանագրի դրույթներին հակասող քայլեր:
- 4.11. Սույն Պայմանագրով սահմանված պահանջների պահպանման վերահսկողությունն իրականացվում է Օպերատորի կանոններով սահմանված կարգով:

#### **5. Վեճերի լուծման կարգը**

- 5.1. Բոլոր վեճերը, որոնք առաջանում են սույն Պայմանագրի իրականացման ժամանակ, Կողմերը պետք է փորձեն լուծել բանակցությունների միջոցով՝ հաշվի առնելով Կողմերի փոխադարձ շահերը: Սույն Պայմանագրով որևէ Կողմին ներկայացված առարկությունները վերջինիս կողմից ենթակա են պարտադիր քննարկման 10 բանկային օրվա ընթացքում:
- 5.2. Պայմանագրի կատարումից Կողմերի միջև ծագած և դրանով չկարգավորված հարցերը ենթակա են լուծման ՀՀ իրավական ակտերի դրույթներին համապատասխան՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## **6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը**

Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե իրենց կողմից պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը արդյունք է եղել անհաղթահարելի ուժի ազդեցության:

## **7. Պայմանագրի գործողությունը**

- 7.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրելու և կնքելու պահից:
- 7.2. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել՝ Կողմերի գրավոր ձևակերպված փոխադարձ համաձայնությամբ:
- 7.3. Սույն Պայմանագրի գործողությունն ինքնաբերաբար դադարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Մասնակցի կամ Օպերատորի լիցենզիաներն ուժը կորցրած/անվավեր ճանաչվելու պահից:
- 7.4. Սույն Պայմանագրի (դրա առանձին դրույթների) գործողությունը դադարում է, եթե ՀՀ օրենսդրությունում, ՀՀ այլ իրավական ակտերում և/կամ Օպերատորի կանոններում կատարվել են այնպիսի փոփոխություններ, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրի (դրա առանձին դրույթների) գործողությունը՝ տվյալ փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվանից:
- 7.5. Օպերատորի կանոններում փոփոխությունների կամ լրացումների կատարմանը հավանություն չտված Մասնակցին իրավունք ունի այդ փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելու օրվանից վաղաժամկետ միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով (ծանցուցելով) Օպերատորին:
- 7.6. Բացի սույն Պայմանագրի 7.5 կետով սահմանված դեպքից, սույն Պայմանագիրը միակողմանիորեն վաղաժամկետ կարող է լուծվել նաև մյուս Կողմին այդ մասին երեք ամիս առաջ գրավոր տեղյակ պահելով:
- 7.7. Պայմանագրի լուծման դեպքում Կողմերի՝ սույն Պայմանագրով և Օպերատորի կանոններով ստանձնած և չկատարած պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:
- 7.8. Սույն Պայմանագրի գործողության ժամկետը մեկ տարի է: Պայմանագրի ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ մյուս Կողմին Պայմանագիրը դադարեցնելու մասին գրավոր առաջարկ չներկայացնելու դեպքում, այն երկարաձգվում է ևս մեկ տարով և այդպես շարունակ՝ յուրաքանչյուր տարի:

## **8. Այլ դրույթներ**

- 8.1. Կողմերի համաձայնությամբ սույն Պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:
- 8.2. Սույն Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրամադրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

## **9. Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները**

### **Օպերատոր**

«ՆԱՍԴ-ԱԶ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ»  
Բաց Բաժնետիրական Ընկերություն

### **Մասնակից**

Հասցե՝  
Հեռ.՝  
Ֆաքս՝  
Էլ.փոստ՝  
ՍիԲիԷյՆեթ իրավասու էլեկտրոնային հասցե՝  
  
ՀՎՀՀ՝

Հասցե՝  
Հեռ.՝  
Ֆաքս՝  
Էլ.փոստ՝  
ՍիԲիԷյՆեթ իրավասու էլեկտրոնային հասցե՝  
  
ՀՎՀՀ՝

Առևտրային հաշիվներ Հաշվարկային բանկում՝  
AMD՝  
USD՝

EUR՝  
Դեպո՝

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

« \_\_ » \_\_\_\_\_ 20\_\_ թ.

« \_\_ » \_\_\_\_\_ 20\_\_ թ.

Կ.Տ.

Կ.Տ.

*(15-րդ հավելվածի փոփոխությունները գրանցված են ՀՀ կենտրոնական բանկում 29.03.2010թ.)*